ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» դեկտեմբերի 2021 թվականի N: 422-Ա ք.Գյումրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին նախատեսված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված հատկացումները առավել արդյունավետ և հասցեական տրամադրելու նպատակով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2021 թվականի դեկտեմբերի 21-ի N:422-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգը սահմանում է ընթացակարգ՝ «Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցներն առավել արդյունավետ և հասցեական օգտագործելու նպատակով, ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ մարզպետ) ներկայացնելու համար:

Մարզպետի որոշմամբ ստեղծվում է ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ), որի կազմը կարող է փոփոխվել յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ:

2. Աշխատանքային խմբի գործունեության նպատակն է՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին (ընտանիքներին) դրամական աջակցության (օգնության) տրամադրման նպատակով ներկայացված եզրակացությունների քննարկումը, ճշգրտումը և մարզպետին ներկայացնելը:

3. Դրամական աջակցություն (օգնություն) տրամադրվում է քաղաքացիների դիմումների հիման վրա «Սոցիալական աջակցության մասին» օրենքով նախատեսված դեպքերում:

Սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման խնդիրներ են սահմանվում՝

1) մարզի սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, բազմազավակ ընտանիքներին աջակցությունը.

2) մարզի սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, առողջական խնդիրներ ունեցող անձանց աջակցությունը.

3) մարզի միայնակ կենսաթոշակառուներին աջակցությունը.

4) մարզի միակողմանի, երկողմանի ծնողազուրկ և միակ ծնողի խնամքին գտնվող երեխաների ընտանիքներին աջակցությունը.

5) ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը.

6) կացարան չունեցող կամ ժամանակավոր կացարանում բնակվող ընտանիքներին աջակցությունը.

7) բարձր առաջադիմություն ունեցող, անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը.

8) մարզի աշխատունակ, սակայն գործազուրկ անձանց աջակցությունը՝ նրանց աշխատանքի տեղավորման խնդիրների լուծման անհնարինության դեպքում:

4. Դրամական աջակցություն (օգնություն) տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին՝ ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, անօգնականության, միայնակության, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերից վերադառնալու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց, ընտանեկան, սոցիալական կամ միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներին կամ քաղաքացիներին, բազմազավակ ընտանիքներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, միայնակ չաշխատող կենսաթոշակառուներին /անժառանգ/, Արցախյան պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև ծառայության ընթացքում հաշմանդամ ճանաչված զինծառայողներին, Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին:

5. Դրամական աջակցություն (օգնություն) ստանալու քաղաքացու դիմումը մակագրվում է համապատասխան ստորաբաժանմանը: Հանձնարարական ստացած ստորաբաժանման մասնագետների կողմից ուսումնասիրվում է դիմումը, ուսումնասիրության արդյունքում կազմվում և ներկայացվում է եզրակացություն (առաջարկություն) դրամական աջակցության տրամադրելու կամ տրամադրումը մերժելու վերաբերյալ: Եզրակացությունն (առաջարկությունն) իր մեջ ներառում է տեղեկատվություն ընտանիքի կամ անձի սոցիալական վիճակի մասին:

6. Դրամական աջակցություն (օգնություն) տարամադրելու նպատակով տրված առաջարկությունները քննարկվում են աշխատանքային խմբում:

Քննարկման արդյունքում առաջարկությունն ընդունվում է քվեարկությամբ՝ աշխատանքային խմբի անդամների ընդհանուր թվի «կողմ» ձայների մեծամասնությամբ:

Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների տարեկան գումարի մինչև 10 (տաս) տոկոսը տրամադրվում է բացառապես մարզպետի հայեցողությամբ:

Աջակցությունը կարող է տրամադրվել ոչ շուտ՝ քան վեց ամիսը մեկ անգամ, մինչև 50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, բացառիկ դեպքերում՝ հաշվի առնելով քաղաքացիների կարիքավորության առանձնահատկությունները, մարզպետի հայեցողությամբ, կարող է տրամադրվել այլ ժամկետներում, դրամական աջակցության այլ չափով:

7.Աշխատանքային խումբը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հերթական նիստը անցկացվում է առնվազն երկու ամիսը մեկ անգամ, (արտահերթ նիստի անհրաժեշտության դեպքում՝ միայն մարզպետի գրավոր հանձնարարականի առկայության պայմաններում՝ այլ ժամկետում): Նիստերը արձանագրվում և ստորագրվում են խմբի անդամների կողմից, իսկ խմբի անդամի կողմից հատուկ կարծիք ունենալու դեպքում՝ ստորագրության կողքին գրառվում է «հատուկ կարծիքը կցվում է» և հանձնվում է ստորագրված հատուկ կարծիքը:

8. Արձանագրությունը ներկայացվում է մարզպետի հաստատմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է